ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **29/06/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/6
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:

Բացակա էին՝ Նազիկ Հարությունյանը, Նորայր Միքայելյանը, ովքեր իրենց բացակայության պատճառների մասին չեն տեղեկացրել:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ջանինա Սարգսյանը, Սոնյա Չիտչյանը, Դիաննա Երեմյանը, Անուշ Ծատուրյանը, Աննա Չոբանյանը, Արա Սիմոնյանը, Եղիշե Ավետիսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Արուսյակ Առաքելյանը

Աշխատակազմի քարտուղարը հայտարարեց ավագանու անդամներ Սեթրակ Սեթրակյանի մանդատը վայր դնելու, Ասպուրակ Պետրոսյանի մանդատը ստանձնելու և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից անցկացվող ավագանու անդամների վերապատրաստման դասընթացների մասին:

Պ. Ցուգունյանի կողմից հարց հնչեց համատիրությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին, իսկ Տ.Գեղամյանի կողմից Լիոն քաղաքում ընթացող հայ-ֆրանսիական համաժողովին Աբովյանի համայնքապետարանից մասնակիցների վերաբերյալ:

Հնչեց պարզաբանում:

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի երկրորդ նստաշրջանի հերթական վեցերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը սահմանելու մասին.

2) Աբովյան համայնքում հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին.

3) Աբովյան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին.

4) Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում համայնքի ավագանու անդամների թեկնածուներ առաջադրելու մասին.

5) Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամներին հաստատելու մասին.

6) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 04-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

7) Աբովյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը հաստատելու մասին.

9) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 06-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

10) Աբովյան համայնքի տարածքում ծառահատումներ իրականացնելուն համաձայնություն տալու մասին.

11) Սուրեն Սերյոժայի Աբգարյանին Աբովյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին.

12) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին.

13) Աբովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

14) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Առինջ գյուղի Վ. Տերյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 13 հասցեում գտնվող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին.

15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 3.16278 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.

16) Աբովյան համայնքի Կամարիս գյուղում գտնվող 07-035-0135-0025 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

17) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղում գտնվող 07-018-0069-0011 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

18) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 07-023-0191-0008 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

19) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0229 կադաստրային

ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
20) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Բ թաղամասի 7/2 և 7/3 հասցեներում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
21) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 8-րդ փողոցի թիվ 15 հասցեում գտնվող 07-018-0101-0016 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
22) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0134-0002 կադաստրային ծածկագրով հողամասից 0.04 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
23) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0307-0005 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
24) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Էդ. Պետրոսյան փողոցի թիվ 1/18/1 հասցեում գտնվող հողամասը Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխային ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով, օտարելու մասին.
25) Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող 68.56 քառակուսի մետր մակերեսով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին.
26) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Սահմանել Աբովյան համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը հայտնեց, որ նախագիծը 3 ձեռնպահ և 2 կողմ քվեարկությամբ չի ստացել ո՛չ դրական, ո՛չ բացասական եզրակացություն և որոշվել է հարցը քննարկել ավագանու նիստի ընթացքում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Լ/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Հաստատել Աբովյան համայնքում հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Լ/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՆՅԱ ՉԻՏՉՅԱՆ/

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը հայտնեց, որ նախագիծը 3 ձեռնպահ և 2 կողմ քվեարկությամբ չի ստացել ո՛չ դրական, ո՛չ բացասական եզրակացություն և որոշվել է հարցը քննարկել ավագանու նիստի ընթացքում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Լ/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 06-ի N 41-Ա որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետը և 17-րդ կետի 1-ին ենթակետը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնում համայնքի ավագանու անդամի թեկնածու առաջադրել Աբովյան համայնքի ավագանու անդամ Վահե Հարությունյանին:
2. Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնում համայնքի ավագանու անդամի թեկնածու առաջադրել Աբովյան համայնքի ավագանու անդամ Արմեն Քոսակյանին:
3. Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնում համայնքի ավագանու անդամի թեկնածու առաջադրել Աբովյան համայնքի ավագանու անդամ Հասմիկ Խաչատրյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու մշտական հանձնաժողովի նախագահը հայտնեց, որ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնում «Հանրապետություն» խմբակցության կողմից առաջադրվել է Գոռ Գալստյանի թեկնածությունը և հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ նախագծում փոփոխություն կատարելու առաջարկով:
Հարցը դրվեց քվեարկության առաջարկված փոփոխությամբ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 06-ի N 41-Ա որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետը, հաշվի առնելով Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի

15-ի N 476 կարգադրությունը, Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամների թեկնածուների ընտրության նպատակով ստեղծված հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի արձանագրությունը, Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2022 թվականի հունիսի 17-ի N 205 հրամանը, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի N 64-Ա որոշումը, Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինները (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին) ձևավորելու նպատակով՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամներին՝

1) Վահե Արտակի Հարությունյան - Աբովյան համայնքի ավագանու անդամ,

2) Աննա Խաչիկի Չոբանյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար,

3) Գևորգ Միհերի Մարտիրոսյան - համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմնի ներկայացուցիչ,

4) Ռուբեն Մաուլենի Զաքարյան – ակտիվ բնակիչ,

5) Մարինե Վաղինակի Մելքոնյան - ակտիվ բնակիչ,

6) Կարեն Գեղամի Հովսեփյան - շահագրգիռ անձ,

7) Ելենա Հովհաննեսի Բաղալյան - ակտիվ բնակիչ,

8) Տաթևիկ Ալբերտի Սիմոնյան - ակտիվ բնակիչ,

9) Աննա Լյուդվիգի Շահնազարյան- ակտիվ բնակիչ:

2. Հաստատել Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի անդամներին՝

1) Արմեն Սուրենի Քոսակյան - Աբովյան համայնքի ավագանու անդամ,

2) Եղիշե Հրաչիկի Ավետիսյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի պաշտոնակատար,

3) Արմեն Սարգիսի Երիցյան - համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմնի ներկայացուցիչ,

4) Լևոն Հակոբի Ժամհարյան - համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմնի ներկայացուցիչ,

5) Երջանիկ Սարգիսի Նիկողոսյան - համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմնի ներկայացուցիչ,

6) Ամալյա Համբարձումի Գևորգյան - համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմնի ներկայացուցիչ,

7) Լևոն Արթուրի Շահինյան - ակտիվ բնակիչ,

8) Հեղուշ Գևորգի Թորոսյան - ակտիվ բնակիչ,

9) Սոնիկ Անդրանիկի Սարգսյան - ակտիվ բնակիչ:

3. Հաստատել Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի անդամներին՝

1) Հասմիկ Իվանի Խաչատրյան - Աբովյան համայնքի ավագանու անդամ,

2) Մարիյա Ռաֆիկի Բաղդասարյան – Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի

բաժնի պետի պաշտոնակատար,
3) Ժաննա Գառնիկի Զեյնալյան – ակտիվ բնակիչ,
4) Արաքսյա Վարդանի Արաբյան – ակտիվ բնակիչ,
5) Անուշ Աշոտի Վարդանյան - ակտիվ բնակիչ,
6) Գոռ Գագիկի Ղալեչյան- շահագրգիռ անձ,
7) Կարինե Բորիսի Փոդյան- ակտիվ բնակիչ,
8) Լիդա Շահենի Խառատյան – ակտիվ բնակիչ,
9) Մելքոն Մինասի Նաջարյան - ակտիվ բնակիչ:

4. Խորհրդակցական մարմինների նախագահը Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, Խորհրդակցական մարմինների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալը:
5. Խորհրդակցական մարմինների քարտուղարը Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից նշանակված Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնակատար Լիլիթ Գրիգորյանն է:
6. Խորհրդակցական մարմինները գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:
7. Խորհրդակցական մարմինների անդամները տվյալ Խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Տիգրան Գեղամյանի կողմից հնչեց հարց, թե ինչու՞ Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում թեկնածուներ առաջադրելու մասին հայտարարությունը չի տեղադրվել նաև www.facebook.com սոցիալական ցանցում և առաջարկվեց նմանատիպ հայտարարություններին ավելի լայն լուսաբանում տալ:
Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:
Հարցը դրվեց քվեարկության համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնում ընդգրկելով Գոռ Գալստյանի թեկնածությունը:

Կողմ-15 Դեմ-9 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգի 25-րդ և 30-րդ կետերը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Աբովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին» N 04-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և 82.1-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1.Հաստատել Աբովյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ համայնքի բյուջեի վերաբերյալ անհամապատասխանությունները շտկելու և ճշտված տարբերակով ներկայացնելու պայմանով:

Ծավալվեց քննարկում «Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին համայնքի բյուջեից տրամադրվող գումարների վերաբերյալ՝ ուղղված բազմաբնակարան շենքերի շքամուտքերի, տանիքների նորոգմանը, վերելակների և գերեզմանատան սպասարկմանը:

Կողմ-14 Դեմ-9 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Աբովյան համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է՝
1. Հաստատել Աբովյան համայնքի (ըստ բնակավայրերի) սեփականություն հանդիսացող գույքի ցանկը՝ համաձայն 1 - 11 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկվեց պետական սեփականություն հանդիսացող, այնուհետև ՀՀ Կառավարության որոշմամբ Աբովյան համայնքին հանձնված անշարժ գույքերի գույքագրման վերաբերյալ, ինչպես նաև գնահատող կազմակերպության կողմից սպասասրահների և այլ գույքերի գնահատման հարցերը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-11 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 06-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 06-Ա որոշմամբ հաստատված 1-9-ը, 18-րդ, 20-րդ, 21-րդ և 25-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-13 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց բարձրացնել ոչ միայն բուժքույրերի, այլ նաև մանկապարտեզների բոլոր աշխատակիցների աշխատավարձերը: Պատասխանվեց, որ առաջարկը կքննարկվի մինչև ընթացիկ տարվա ավարտը բյուջեի եկամուտները ամփոփելուց և խնդիրները վերլուծելուց հետո և հնարավորության սահմաններում կներկայացվի առաջարկություն:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԾԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Աբովյան համայնքի տարածքում ծառահատումներ իրականացնելուն՝ ծառերի կենսաբանական հատկանիշների վերաբերյալ մասնագիտական եզրակացության հիման վրա:
2. Սահմանել, որ հատման ենթակա ծառեր են՝ ընտրված լավագույն և օժանդակող ծառերի աճին ու սաղարթի ձևավորմանը խոչընդոտող, չոր, չորացող, քամուց և ձյունից կոտրատված, հիվանդություններով և վնասատուներով վարակված, անորակ բնով և սաղարթով, գերհասունացած, բամբակատու և բնակչության համար վտանգավորություն ներկայացնող ծառերը:
3. Ծառահատումներն իրականացվում են «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով՝ հատված (հեռացված) ծառերը փոխարինելով նոր տնկվող ծառերով:
4. Ծառահատումների իրականացումը վերահսկվում է համայնքի ղեկավարի ստեղծած հանձնաժողովի կողմից՝ որը հաշվետու է համայնքի ղեկավարին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկվեց հանձնաժողովի ձևավորման և հանձնաժողովում մասնագետներ ներգրավելու հարցը, և առաջարկվեց նախագծի 2-րդ կետում «չորացող» բառը փոխարինել «չորացած» բառով:
Հարցը դրվեց քվեարկության առաջարկված փոփոխությամբ:
Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՍՈՒՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգի 159-րդ և 160-րդ կետերը, հաշվի առնելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Սուրեն Սերյոժայի Աբգարյանի ունեցած մեծ վաստակը, երկարամյա անբասիր աշխատանքը, ինչպես նաև բացառիկ ձեռքբերումները համայնքի

մարզական կյանքի զարգացման գործում, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Սուրեն Սերյոժայի Աբգարյանին շնորհել Աբովյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2022 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հայտարարվեց, որ ավագանու մշտական հանձնաժողովի կողմից առաջարկվել է նախագծով ներկայացված ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները՝ ցանկից հանել 112-րդ, 121-րդ և 123-րդ տողերը, 113-րդ տողով ներկայացված գույքի մեկնարկային գինը սահմանել 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ, իսկ 122-րդ տողով ներկայացված գույքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 200 %-ի չափով:

Քննակվեց Վ.Պտղնիում 3000 հա հողամասի ծանրաբեռնվածության հարցը և հողամասն ամբողջությամբ աճուրդի հանելու պատճառները: Առաջարկվեց բարձրացնել ցանկում նշված որոշ հողամասերի մեկնարկային գները:
Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել դրական եզրակացություն և հարցը թողնվել է ավագանու նիստի քննարկմանը: Հարցը դրվեց քվեարկության ավագանու մշտական հանձնաժողովի առաջարկած փոփոխություններով:

Կողմ-15 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2022 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված ավտոտնակները, արտադրական և հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել դրական եզրակացություն և հարցը թողնվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Վ. ՏԵՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N 1585-Ա որոշման, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալի գրությունը (մուտք՝ 2022 թվականի մայիսի 18-ի N Պ-674), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետությանը պատկանող Աբովյան համայնքի Առինջ գյուղի Վ. Տերյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 13 հասցեում գտնվող գույքի (հիմք՝ 2022 թվականի մայիսի 16-ի N 16052022-07-0200 վկայական) սպասարկման համար առանձնացված համայնքային սեփականություն հանդիսացող 07-011-0154-0035 կադաստրային ծածկագրով 2,40935 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի:
2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3.16278 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 8-ի N 1/փ-117 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2021 թվականի դեկտեմբերի 17-ի NԼ-666

լեռնահատկացման ակտը և օգտակար հանածոների արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/666 թույլտվությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0161-0103 կադաստրային ծածկագրով 3.22792 հեկտար մակերեսով հողամասից՝ (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 23-ի N 23022021-07-0085 վկայական) 3.16278 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ ընդերքի օգտագործման գործառնական նշանակության հողի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի՝ վարձակալությամբ «ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդերքօգտագործման նպատակով տրամադրել սույն որոշման 1-ին կետում նշված 07-013-0161-0103 կադաստրային ծածկագրով 3.22792 հեկտար հողամասից 3.16278 հեկտար հողամասը (համաձայն հատակագծի):
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 20 (քսան) տարի՝ տարեկան 1 369 880 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր ութսուն) դրամ վարձավճարով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Հարցի ներկայացման ընթացքում Է. Հարությունյանը լքեց նիստերի դահլիճը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-035-0135-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Լյոնիկ Գրիգորյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 8-ի N Ք-2628), Աբովյան համայնքի ավագանին որոշում է.
1. Լյոնիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հունիսի 3-ի N 03062020-07-0103 վկայական) Աբովյան համայնքի Կամարիս գյուղում գտնվող 07-035-0135-0025 կադաստրային ծածկագրով 0,0998 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լյոնիկ Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացնելու ընթացքում Գ. Գալստյանը լքեց նիստերի դահլիճը:

Քանի որ ավագանու մշտական հանձնաժողովը հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին բոլոր որոշման նախագծերին տվել է դրական եզրակացություն, առաջարկվեց օրակարգի 16-ից 23-րդ հարցերը դնել քվեարկության միաժամանակ:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-018-0069-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Գագիկ Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մարտի 14-ի N Ք-835), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1.Գագիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի հունիսի 20-ի N 20062018-07-0075 վկայական) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղում գտնվող 07-018-0069-0011 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգի, բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) արտադրամաս կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ դիմումի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի

նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-023-0191-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Սմբատ Պետրոսյանի և Խաչատուր Գյոդակյանի լիազորած անձ՝ Թաթուլ Պետրոսյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 1-ի N Ք-2462), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1.Սմբատ Պետրոսյանին և Խաչատուր Գյոդակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 12-ի N 12052022-07-0083 վկայական) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 07-023-0191-0008 կադաստրային ծածկագրով 0,141 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների անասնաշենքեր կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0315-0229 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Իրա Հայրիյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի մայիսի 31-ի N Ք-2432), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Իրա Հայրիյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունվարի 27-ի N 27012022-07-0050 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0229 կադաստրային ծածկագրով 0,06 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության (վարելահող, այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի, բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներով) արտադրամաս կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Բ ԹԱՂԱՄԱՍԻ 7/2 ԵՎ 7/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 26-Ն որոշման, հաշվի առնելով Բաբկեն Հովակիմյանի 2021 թվականի ապրիլի 1-ի դիմումը և հիմք ընդունելով հողերի օգտագործման

ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի N 27 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Փոփոխել Բաբկեն Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյան համայնքի Առինջ գյուղի Բ թաղամասի 7/2 հասցեում գտնվող (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 1-ի N 01022021-07-0034 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-011-0216-0027) 0.99552 հեկտար մակերեսով (որից՝ 0.66162 հեկտարը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ պահեստարանների և 0.3339 հեկտարը գյուղատնտեսական նշանակության այլ հողեր) և Աբովյան համայնքի Առինջ գյուղի Բ թաղամասի 7/3 հասցեում գտնվող (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 1-ի N 01022021-07-0040 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-011-0216-0028) 0.02087 հեկտար մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ հողամասերի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողամաս:

2. Բաբկեն Հովակիմյանը պարտավոր է՝

1) 0.3339 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 9001052011363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 35 083 041 (երեսունհինգ միլիոն ութսուներեք հազար քառասունմեկ) դրամ:

2) 0.66162 հեկտար և 0.02087 հեկտար մակերեսներով հողամասերի համար Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 687 249 (վեց հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր քառասունինը) դրամ՝ որպես հողամասերի գործառնական նշանակության փոփոխության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բաբկեն Հովակիմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-018-0101-0016 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 26-Ն որոշման, հաշվի առնելով «Միգ Տեխսպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մայիսի 31-ի N S-645) և հիմք ընդունելով հողերի օգտագործման

ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 28-ի N 30 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «Միգ Տեխսպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի ապրիլի 8-ի N 08042021-07-0095 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-018-0101-0016) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 8-րդ փողոցի թիվ 15 հասցեում գտնվող 1.31924 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:

2. «Միգ Տեխսպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 1 369 240 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար երկու հարյուր քառասուն) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0134-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.04 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Մերուժան Հակոբյանսի հայտը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 15-ի N Ք-2784), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Մերուժան Հակոբյանսին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունվարի 21-ի N 21012022-07-0004 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0134-0002 կադաստրային ծածկագրով 0,178 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից 0.04 հեկտար հողամասի (համաձայն հատակագծի) նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության շինություն կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին

սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մերուժան Հակոբյանսին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0307-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Վազգեն Ասատրյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի մայիսի 26-ի N Ք-2365), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Վազգեն, Ռիմա, Քրիստինե և Վարսիկ Ասատրյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի N 14102013-07-0064 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0307-0005 կադաստրային ծածկագրով 0,46815 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներով) արտադրամաս կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷԴ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/18/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԻՏԽԱԼԲԽԱՅ ՌԱՄԱՆԻ ՎԱԼԼԱԲԽԲԽԱՅԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխայի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 15-ի N Ք-2790), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 27-ի N 27052022-07-0002 վկայական) Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցի թիվ 1/16/1 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 2431.5 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2014 թվականի հուլիսի 30-ի N 30072014-07-0050 վկայական) Աբովյան քաղաքի Էդ. Պետրոսյան փողոցի թիվ 1/18/1 հասցեում գտնվող 07-002-0118-0009 կադաստրային ծածկագրով 275.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0118-0014 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխային:

2. Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխայը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել 4 448 565 (չորս միլիոն չորս հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր վաթսունհինգ) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխայի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիտխալբխայ Ռամանի Վալլաբխբխային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 68.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված կարգի 39-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2022 թվականի փետրվարի 01-ի N Կ-01022022-07-0103 որոշումը և հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի պաշտոնակատարի զեկուցագիրը (մուտքէ 2022 թվականի հունիսի 14-ի N Ք-2735), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող, սակայն որպես «անհայտ» քաղաքացու անվամբ հաշվառված 07-002-0002- ծածկագրում 68.56 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել Աբովյան համայնքի սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Գ. Գալստյանը վերադարձավ նիստերի դահլիճ:

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի սեպտեմբերի 13-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N86-Ա/

Ավագանու անդամներ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԷՄԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____